ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԵՐԺԵԼ Է ՂԱԶԱՐՈՍ ԿՅՈՒՐԵՂՅԱՆԻ ԲՈՂՈՔԸ

Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմից Մայր Աթոռ ստացված տեղեկության համաձայն, 2004 թվականի հունվարի 21-ին Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանը մերժել է Ղազարոս Կյուրեղյանի (կարգալույծ հռչակված նախկին Տիրան արքեպիսկոպոս) բողոքն ընդդեմ 2003 թվականի հոկտեմբերի 1-ի Մոսկվայի քաղաքային դատարանի որոշման: Գերագույն դատարանի վճռով հաստատվում է, որ Ղազարոս Կյուրեղյանի կողմից «Մոսկվայի Հայ Առաքելական Եկեղեցի» անունով ստեղծված կազմակերպության, որպես անկախ կրոնական կառույցի, գրանցումը խախտում է Հայ Առաքելական Եկեղեցու կանոնադրությունը, ինչպես նաև հակասում խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին օրենսդրության պահանջներին: Հետևաբար, այդ կազմակերպության գործունեությունը անօրինական է, իսկ ներկայացրած դատական հայցն ու բողոքը Գերագույն դատարան՝ անհիմն:

Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի հավաստմամբ, թեմը, պահպանելով իր ներքին միասնությունը, արդեն իսկ կարող է լիարժեք իրականացնել իր առաքելությունը:

Այս առիթով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետն իր գոհունակությունը և գնահատանքն է հայտնել Ռուսաստանի Դաշնության օրենսդիր և դատական ատյանների բոլոր օրինահարգ անդամներին, ովքեր անաչառություն են ցուցաբերել հարցի արդարացի լուծման համար:

Նորին Սրբությունը լիահույս է, որ հետայսու թեմը կկարողանա առանց խոչընդոտների շարունակել իր ծառայությունը՝ ի պայծառություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ի զորացումն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ